ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«25» 05 2019 թ.
№ ՊՄ/Ա/ԱԿ

«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի տնօրեն
Է. Փոթոյանին
ք. Երևան, Ավետիսյան 76շ. բն. 17
էլ. հասցեն՝ hermine.farmec@mail.ru
ՀՎՀՀ 00650302

Ի լրումն 21.05.2019թ. ելք ԴՎԱ/1923 գրության՝ կից ներկայացվում է ՀՀ պաշտպանության նախարարության և «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի միջև 07.02.2018թ կնքված N ԳՀԱՊՁԲ-9/4/1-8 ծածկագրով գնման պայմանագրի լուծարման վերաբերյալ ծանուցման շտկված տարբերակը, միաժամանակ խնդրում եմ 21.05.2019թ. ելք ԴՎԱ/1923 գրությունը չքննարկել:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի միջև 07.02.2018թ. կնքված ՈԳՀԱՊՁԲ-9/4/1-8 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ նաև Պայմանագիր) և դրա հիման վրա 27.04.2018թ. կնքված N1 համաձայնագրի (այսուհետ՝ նաև Համաձայնագրի) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2018թ. 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում մատակարարել ***2,000 դեղահատ Կլարիթրոմիցին j01fa09 /Կլարիթրոմիցին clarithromycin/,*** սակայն Պայմանագրով և դրան կից կնքված N1 Համաձայնագրով նախատեսված պայմաններին համապատասխան «***Կլարիթրոմիցին j01fa09 /Կլարիթրոմիցին clarithromycin/»*** մատակարարում «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից չի իրականացվել:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը և Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.05.2019թ.-ին միակողմանի մասնակի լուծում է ԳՀԱՊՁԲ-9/4/1-8 ծածկագրով պայմանագիրը դրա և հիման վրա 27.04.2018թ. կնքված N1 համաձայնագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել ***9,576.5 (ինը հազար հինգ հարյուր յոթանասունվեց ՀՀ դրամ հիսուն լումա)***՝ որպես պայմանագրով նախատեսված տույժ, ինչպես նաև տուժանք՝ ***35,800 (երեսունհինգ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ*** որպես պայմանագրի կատարման ապահովում (կնքված պայմանագրի գումարի 10%-ը)՝ 900005000758 հաշվեհամարին:

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

0044, Երևան, Բագրևանդի 5, Հեռ.՝ (+374 10) 29 45 45, Ֆաքս՝ (+371 10) 29 46 13, Էլ.փոստ՝ depart@mil.am
Ереван, Багреванда 5, 0044, Тел: (+374 10) 29 45 45, Факс. (+374 10) 29 46 13, Эл.почта: depart@mil.am
0044, 5 Bagrevans Str., Yerevan, Tel. (+374 10) 29 45 45, Fax: (+374 10) 29 46 13,E-mail: depart@mil.am